


Српский Училище

Училище

891.99

У-80



ԵՐՈՒԱՆԻ ՄԿՐՏԵՉՈՒՆ

# ՎԱՃԽԱՌՈՒՆ

Գարնալից քառ եւս մէկ արար



Թիւ 1

ՀՐԵՏԱՐԱԳՈՒԹԻՒՆ ԳԱՆՔԻԻ

Ս. Դ. ՆՆՉԱԿԱՆ «ՄՐԾԻԻ» ԹԱՏԵՐԱՄԲԻ

1918

891.99  
Լ-80

891.99

12-80

10 NOV 2011

ԵՐՈՒԱՆԴ ՄԿՐՏԻԶԵԱՆ

# Վ Ա Շ Ի Ա Ռ Ո Ւ Ն

Բարոյալից զանեց մէկ արար

Արժուում Գահիրէի Բաղաճական Եւ Քաճեճական  
գրաճնութեանց կողմէ 16-4-918ի թիւ 848 հրաճանագրով



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ  
Ս. Գ. ՀՆԶԱԿԵԱՆ «ԱՐՇԻՒ» ԹԱՏԵՐԱԿՈՒՄԲԻ



Գահիրէի Ս. Դ. Հնչակեան «ԱՐՇԻԻ», բաժնե-  
 րախօսմբի կնիքը չի կրող օրինակները  
 անվաւեր են:



Եւ ըստ ի՞նչ անձնատան ձեռք  
 Քարտի Զ. Աւարտիքաւ.

Սրտաւ Ձեռքաւ անձնատան  
 ւրդ.

Սրտաւ Ձեռքաւ

Քարտի. (Եւրոպայ)

1918 ըստ 20.

03 JUL 2013

44439

# ՎԱՇԽԱՌՈՒՆ



«Վ.Ն.Ա.Ռ.ՈՒՆ» գրադիտական հոյակապ գործ մը չէ :

Չանկիա երկաթիբլու միջոցին՝ պէտք ու նպատակ չունեցայ գեղարուեստագիտական կատարելութիւններ համաբերելու : Քսան երկու տարուան բեմական փորձառութիւնս դաս մը միայն տուած է ինձ, այն է՝ ներկայացրնել կեանքը այնպէս՝ ինչպէս որ է : Բեմական հեղինակ մը, անոր մէջ, ոչինչ ունի ինքիրմէն ստեղծագործելու, և անոր վրայ՝ ոչինչ ունի ինքիրմէն աւելցրնելու իբրև գրադիտական սեթեւեթ : Անոր համար, բուն հեղինակը՝ հասարակութիւնն է, և հեղինակի անարգար իրաւունքը վաշխաւորներ՝ գննող, քննող ու արտայայտողներ են : Վաշխաւորի գործին մէջ սոսկ այդ եղած է իմ հեղինակի բաժինս : Հասարակութիւնէն առնել, ու հարազատօրէն անոր դարձնել :

Հարազատութիւնը՝ որ օրուան ոստանիկ գրականութեան շքիղ հաստատութիւնէն ներս, իբր անպաճօճ կառուցուածք՝ խորթ ու մերժիկ պիտի նկատուէր, ընդհակառակն, որպէս իրականութիւն՝ որպէս ապրուած կեանքի թանկագին ու արժանահաւատ անխորհրդապահութիւն, գնահատուելու իր օրն ու տեղը պիտի ունենայ, և ի դարու հայ վաշխաւորին անհատական կեանքը ինքրուն ապրող հայ գրականութեան համար ցեղին այսօրուան ընկերային կեանքը լուսարանող մէկ հաւաստարանը պիտի դառնայ :

Գրականութեան թատերա դաւելչուական սեռը, մեզի համար, դեռ խոսքան դաշտ մըն է, որուն՝ հազիւ մէկ եզերքէն ներս հերկումի սրբազան արօրը քանի մ'ակիտներ բացած է. և ես մշակումի այդ աշխատանքն է զոր շարունակելու փորձը կընեմ : Յաջողութիւնը՝ որ ջանքերը գէպի նպատակ պիտի առաջնորդէ, կը կայանայ սոսկ գոր-

ԵՐՈՒԱՆԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Հանրային Գրաստան



55399-66

# ՎԱՇԽԱՌՈՒՆ

Բարոյալից գաւեօս մէկ արար

## ԱՆՁԻՆՔ

ԿՈՉՄՈՍ . . . . .	ՎԱՇԽԱՌՈՒՆ
ԳՈՒՐԳԷՆ . . . . .	ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԳՍՆԻԷԼ . . . . .	ԽՈՉԱԳՈՂ

Տեսարանին ձախ կողմը կը ներկայացնէ փողոց մը, աջ կողմը՝ կողմասին խանութը, ուր կան, սեղան մը, գրիչ, կաղամար երեք քար, և երկու աթոռ. նոյն կողմը սլափին վրայ երկաթ թելով կախուած հին վիճակահա. նութեան տոմսեր խորը գրամարկղմը՝ որուն վրան ջուրով լի փարչ մը սկուտեղ և կարգ մը առարկաներ դրուած են .

## ՏԵՍԻԼ Ա.

### ԿՈՉՄՈՍ

(Կողմու քելին աս կէն արաբական չոր հացի կտոր մը կը հանէ եւ օւտելով ներս կը մտնէ, վերակուլին զբաւ. նէն տեսակ մը հանելով սեղանին վրայ կը դնէ, նոյն տեսակէն բանալի մը կառնէ դրամարկղը կը բանայ. մեջէն հաշիւի եւ ստացագրի երկու տեսակները հանելով, միւս տեսակին վրայ կը դնէ. յետոյ վիճակահանութեան տու. սեր որոնք երեք մասի կը բաժնէ, սեղանին վրայ կը

ծին մատչելի ըլլալուն մէջ: Մատչելիութեան մեր պայ. մանները ուսումնասիրելով գտած եմ, որ ո՛ր և է ժամա. նակ, նուազ հոգնութիւններով ու սակաւաթիւ դերակա. տարներու մասնակցութեամբ՝ հանրութեան հաճելի ժամ. անցներ ստեղծել կարենալու համար, պէտք է որ բնամ. դրելի գործն ըլլայ կարճ, և բազմաթիւ դէպքերու բարդ ազատութիւններէն զերծ:

Եւ Վաշխառուն այս նկատողութեան յարմարցուած է: Հայ լեզուով, զաւելտական թատրերգութիւն մը գրել, իր դժուարութիւնն ունի: Մեր մէջ ժողովրդական խօսակ. ցութիւնը՝ հեգնելու, կամ ծաղրելու համար իր ինքնու. լոյն բարբառն ունի, որ օտար, մասնաւորապէս թուր. քերէն բառերու և ասութիւններու խառնուրդ մ'եղած է: Անոնք որ կատակախաղ դրած են, այս լեզուէն օգտուած են: Պէտք էր սակայն այդ սովորութիւնէն արդար չեղում մը կատարել: Եւ, հայ լեզուին հարադատ ձկունութիւնը գրական այս սեռին վրայ փորձելու հետամտութեամբ պէտք էր օտար բառերու տեղ հայերէն բառեր գետնգիլ:

Եւ Վաշխառուն մէջ այդ փորձը ըրած ենք: Այս առաջին երկին պիտի յաջորդեն և ուրիշներ: Հեղինակ անոնք պիտի ներկայացունեն հանրութեան: Հանրութեան քաջալիրանքը, ինչպէս ամէն ձեռնարկնե. րու յաջողութեան, այնպէս ալ գրական այս սեռին դար. ացման զլիաւոր աղբիւրն է: Անոր մէջ վայելելով զա. ղախարական ասպնջականութեան մը քաղցր առինքնումը, նոր փթթող հանճարներ պիտի ընթանան դէպի իրենց կա. տարելութիւնը այն դաշտին մէջ, ուր Վաշխառուն և մշակութի նախնական արօրազրութիւնը պիտի ընենարդէն:

Վաշխառուն գէթ այս հաճոյքը կը ներշնջէ՝  
 ՀԵՂԻՆԱՓՈՒՆ

օեղաւորէ, եւ անոնց վրայ մէկ մէկ քար կը զետեղէ .  
դրամարկը կը պէտքով բանալին խնամով կը պահէ . Այլու  
օեղին մէջ փարչէն ջուր կը լեցնէ, սեղանին վրայ կը դնէ,  
կը նստի, հացը ջուրին մէջ քարխելով կը շարունակէ ուտել :

Կողմուս — Հըմայէկա ելքը հեղ մը հայտ . ( մեծ տես-  
րակը աչքին մօտեցնելով կը զննէ սագնապով ) Ըս մեծ  
պատերազմ արան ըմմանական բան թանկցու, տանը  
ծախքերը եւեցան . . . թէ որ էրեւոյ գիննայի, ըմմն-  
նական իւտելիւք էեւլ էեւրօք կառնէի իւ տանը մէջ կը  
պահէի . . . ( խորհրդաւոր ) Ըն ատենն ալ մեր կնիք ըլլա-  
լիւքը հաշիւը չի գիննալին մէնչիւկներուն էեւլ էեւրօք  
ուտելիք տի տար . . . նորէն տանը ծախար ընծի թան-  
կը տի նուտէր . . . էվ էրէսին քաւտիւն օտի ալ  
ըզ բանբուն հըմար, գործին տի հէսացնանք . . .  
ընգամ մալ միւտքը հայտ . ( կը զննէ ) ( Ին բարօվ է,  
էրանի թը Ըս պատերազմը 4-5 տարի չի ըմանար ուր  
ըստէն շատ մարդիկ նեղը մուսային իւ էեւլ էեւրօք, տու-  
կոտով գրամ առնէին, ( հացը կուտէ վրային կուտէ կուտէ  
փարչով ջուրը կը խմէ ) փաւք քեզ Տէր . . ., ասոր ալ  
փէրս լցուաւ . ( հաշիւները զննելով կը գրալի :

ՏԵՍԻԼ Բ.

ԿՈՉՄՈՍ, ԳՈՒՐԳԷՆ

Գուրգեն (մեկուսի) Այս մարդը հայու մը կը նմանի,  
անգամ մը փորձեմ, կարելի է թատրոնի տոմակ մ'ալ ի-  
րն կը ծախեմ (բարձր) բարեւ Տիար :

Կողմուս — Բարին արեւուզ աղա, հարամնեցէք, (ա-  
րո՞ւ մը կուտայ .)



ԵՐԻՒԱՆԻ ՄԿԻՏԻԳԵԿԷՆ  
Վախաճառի գրիչն էն

ուրգեն — Շնորհակալ եմ: (Աթոռին վրայ կը տե-  
նի:)

Կոզմոս (մեկուսի) Փորձինք տեսնենք թը ի՞նչ բանի  
եկած է: (բարձր) ի՞նչ լիւր կայ աղա:

Գուրգեն — Պատերազմի առթիւ գործերնիս շատ գէշ  
են, (գրայտնէն տուտակ մը հանելու կըլլայ: բայց  
ստիպր հասած չի համարեւ ներկայացնելու:)

Կոզմոս (մեկուսի) Ընդամենը նեղը մտնացած է,  
ստիպր գրամ տի ուզէ: փորթիքան տամ քթին ուր.  
տակոս արնեմ, (բարձր) յուսով իմ թը՝ գործերնիս  
ստիպր աղլի թը որ ժըմընկու պատերազմը լուսուննայ:  
Գուրգեն — Ես ալ այդպէս կը յուսամ:

Կոզմոս — Է՛վ արթէն կըսին թը, հայերիս մենծ  
բուրն տի տան ու ֆէճնտեղուկը, ըմմն ըզ-  
այի տիւն, տեղ, դուրամ է՛վ հարս ալ տի տան  
որ կը բաժն ու կը փունցայ):

Գուրգեն — Հաւանականաբար: (մեկուսի) ազգասէր  
եմ: յուսայ: Տոմսակը չպիտի մերժէ: . . .

Կոզմոս — Միննակ Տէրօջմէ յիւսը կըյրելիւ չէ: Է՛վ  
ուս է (կը հազայ):

Գուրգեն — Ես ալ այդպէս համոզուելով որոշած եմ  
թը թը ճիգերովս աշխատիլ (մեկուսի) երանի թէ  
տոմս մը ըլլար քովս այս մարդը պիտի առնէր,  
ընց մը կը խոսի):

Կոզմոս (Աչիին ծայրովը Գուրգենը դիտելով մեկուսի)  
տեղուկը գրաւ դնելու հրմար խօսք բանալու կու ա-  
նջնայ (կը յօտանջէ:)

Գուրգեն — (մեկուսի) Ինչ որ է, լո՛ծի տեղ քանի մը  
ուս աղէրովէ կուտամ, (բարձր) հայրենակից ձեզի բան  
է՛վ պիտի առաջարկեմ:



Կոզմոս — Միտքդ հասկցայ աղա . մի նեղուիր , ծա-  
ռայականա ալ էրիտասարդ եղած ժըմընակ քըզի պէս ըրած  
է . էլ հըմայիկս ընգամ . ձերացած իմ նը . ցորիկները  
Ֆէտս ըշխըտեղէս անդիւն . գիշերներն ալ տանս մէօջ նո-  
րէն հաշիւներօք կաշխատիւմ . ( էիքր կը խառնէ մեջեմ աղ-  
տոսութիւն հանելով մասովը կը գլորէ ու կը նեցէ . )

Գուրգեն — ( մեկուսի ) կերեւի թէ բարենպատակ ըն-  
կերութեան մը մէջ Գանձապետ կամ Հաշուակալ է .

Կոզմոս — ( Շարունակելով ) ըշխատութեամբ ըմմեն  
բան կը յաջողուի . . . Ողորմած լուսֆօքի Շէշպիշինց  
պայլէլիս կենդանի աղօտքը բարեխօս կատէր ուր . « զի  
որ աշխատ լիցի ապա վայելեացէ .

Գուրգեն — Ճիշդ այդ յոյսով եմ որ այսօր ձեր մե-  
ծագտութեան կը ներկայանամ .

Կոզմոս — Բարով իւր արեւ աղա . վիւրիւշ պատիօք  
ճամբայ չիւկայ ( կը գերուի ) :

Գուրգեն — ( Մեկուսի ) Շուտ մը երթամ Պէնուտ  
մը բերեմ արգեօք , ( կը մտածէ ) յարմարութիւն չպ  
աւնէ . ուրիշ անգամ ( բարձր ) ըն հայրենակից :

Կոզմոս — Ծառայ եմ աղա . քընի ոսկի կուզէք .

Գուրգեն — Շնորհակալ եմ ձեր առատաձեռնութենէն  
պիտի խնդրէի , որ ինձի հանդէպ ներողամիտ գտնուիք  
որովհետեւ քովս Պէնուտի տոմս չունիմ . . . պարտաւո-  
րուած եմ անոր տեղ Ռէզերվէ տալու . . . իսկ եթէ . . . :

Կոզմոս — ( Ապօք ) Ռէ-Սէ-Վէն ի՞նչ աըլլիւ .

Գուրգեն — ( Իրպանէն տուներ հանելով ) Այսինքն  
Թատրոնի 20 շրուշնոց տոմս . . . քանի հատ կուզէք :

Կոզմոս — Ծառայականս թիվաթրոնի տոմսակ չեմ  
ծախար , վըճըխանութեան տոմսակ կու ծախեմ :

Գուրգեն — Իսա լիցի այս տոմսակները ծախելու հա-

մար չէ , որ կուզեմ տալ , այլ ընտանեօք Թատրոն գալ և  
մեր ձեռնարկը քաջաշիբել .

Կոզմոս — ( Սրնեղ ) վէօջ էս , էվ վէօջ ալ իմ ըն-  
տանիւքս թէլաթրոն կերթանք . ( մեկուսի ) սս մարդու-  
կը ի՞նչ կը ծամի . ( Տեսակներով կզբապի ) :

Գուրգեն — Խնդիր չէ . . . տոմսակ գնեցէք , զոնէ նիւ-  
թապէս քաջաշիբած կըլլաք մեր ձեռնարկը .

Կոզմոս — Ան ուր թէվաթրոն էի տի էրթամ նը ,  
ի՞նչ պատճառօք դուրամ տի տամ

Գուրգեն — ( Պալաթիւնութիւնը պահելով ) Որով-  
հետեւ տրուելիք ներկայացումը հայրենասիրական նպա-  
տակի համար է .

Կոզմոս — Չիմ կըյնար արնեղ .

Գուրգեն — Գոնէ հատ մը սուէք .

Կոզմոս — Չիմ կըյնար տաի .

Գուրգեն — Բայց դուք չըսիք , որ յուսանատեղու  
չէ՛ աշխատելու է . . . Ժամանակին ես ալ ձեզի պէս ըրած  
եմ , եւն . և նոյն իսկ հարցուցիք թէ քանի՞ ոսկի կուզեմ .

Կոզմոս ( Հանգարեօրէն ) ծառայականս գնացաւ թը  
տօկտով դուրամ տի արնէիւր :

Գուրգեն — Ուրեմն թիւրիմացութիւն կայ մեր մէջ .

Կոզմոս — Հուրամանք է .

Գուրգեն — Ամէն պարագայի մէջ . չի վայելի , որ հայ-  
րենասիրական նպատակի մը համար 20 շրշնոց տոմս մը  
մերժէիք . . . Եւրոպացիները անգամ մեզի կը նպաստեն .

Կոզմոս — ( Խորհրդաւոր ) թը որ քըզի պէս ամեն  
գալողին գուրամ տայի նը , պէտք էր ուր տարին ա-  
մենէն քիչը , քուսան ոսկի տուած լինէի , քուսան տա-  
րի է ուր Ֆէտս եմ , կաներ 400 ոսկի . էլ ընոնց տօկտը .  
( Երև վեճակամանութեան տոմսի մը կոնսլիք գրելով ) տօ-

կոսին սօկոսը . . . կանէ ըմմէնը 147 հոսկի . հիւսիւն վեր-  
կու զուրուշ վիւթը միւլիւմ . . . էվ թը որ ըզ դուրամնե-  
րուն սօկոսը չըբըթըկանօք կամ ըմսականօք հաչուիւմ նը .  
ըն ժամանակ, էվէլի մեծկակ գոււմար մը տըլլի . էվ հը-  
մայէկս ծառայականս ալ փուճացած տըլլէր . ( գրած տուսը  
պլօրեկով ականջը կը մաքէ ) .

Գուրգեն — (Մեկուսի) Արգէն փճացած ես . ( բարձր )  
ես չատեր կը ճանչնամ . որ 20 տարի անդգաար իրենց  
հայրենիքին համար դրամ տուած են , և փոխանակ փճա-  
նալու . ընդհակառակը միշտ յառաջադիմած են իրենց գոր-  
ծերուն մէջ .

Կոզմու — (Անտարբեր ) ըմմէն մարդ իւր հաչիւը գի-  
տէ . . .

Գուրգեն — Ձեր գիտցած հաչիւէն այնպէս կը հետու-  
ցընեմ թէ՛ 20 տարուան մէջ ազգին 20 փարայ իսկ տը-  
ւած չէք .

Կոզմու — ( Շեւեկով ) վիւրիւչներուն պէս ալ ազ-  
գէն դուրամ առած չիւմ . . . ալ իշ կուզիք .

Գուրգեն — Ազգային գործերով ալ բնաւ հետաքրք-  
րըրուած չէք .

Կոզմու — Վէօջ .

Գուրգեն — Քիչ առաջ ի՞նչ նպատակաւ «հայերուն  
թագաւորութիւն պիտի տրուի, գործերնիս լաւ պիտի ըլ-  
լայ» ըսիր .

Կոզմու — (Բարեկամաբար ) Քըզի մխիթարելու հը-  
մար ըսի, մինչո զատրակ միտքերդ մէկըիւ արի . . . նայէ  
իւր ըսանկ ազատ էրկրի մի մէօջ դուրամ վաճառկիս .  
մարդ ըլնիւս, բաւական է որքան ուր ստանկը մեզի վըսս  
արաւ էվ կողըպտեց . Ուրտեղ փորդ կշտանայ նը . հէօն  
հայրենիք է, ծառայականս փորձուած մարդ եմ, քըզի ա-

ռանց սօկոսի խուրատ կուտամ թը՝ որ փաստարան  
մ'ըլլիր, էվ քըզի հետ ասքան խօսք անէր դուրամ կը պա-  
հանջէր .

Գուրգեն — Քանի որ դուն այս տուած խրատներուդ  
փոխարէն դրամ չես պահանջեր . ես ալ հիմայ կը պար-  
տաւորուիմ քեզի բանի մը խրատներ տալ . երախտիքս  
փոխարինած ըլլալու համար .

Կոզմու — ( Անտարբերօրէն տեսակը զննելով ) Խօրը-  
թէ ականջս բերանդ է . . .

Գուրգեն — Դուք կըսէք թէ գրամ շահելու աշխատիմ,  
և ուր որ փորս կշտանայ այնտեղ հայրենիք նկատեմ .

Կոզմու — Հուրամանք է .

Գուրգեն — Արդ ձեզի բացայայտ օրինակ մը տամ .  
ականջնիդ սրեցէք .

Կոզմու — Պատրաստ եմ . ( արհամարհանօք ) .

Գուրգեն — Ժամանակ մը Տաճկաստանի մէջ հայերուն  
մեծ մասը քեզի պէս դրամ շահելով պարսպեցան և միայն  
փորերնին կշտացնելու համար հոնտեղ հայրենիք նկատեցին .

Կոզմու — ( Ընդմիջելով ) բարօլ են արեր . . .

Գուրգեն — Տաճիկ կատալարութիւնը, ոչ միայն ա-  
նոնց դրամները յախշտակեց . այլ անոնց կեանքն ալ փը-  
ճացուց . բայց գտնուեցան հայեր ալ , որոնք իրենց կեան-  
քը տուին . աշխատեցան իմ և քու օգտին համար . վաղը  
անոնց արիւնին և աշխատութեան շնորհիւ , մեր ապա-  
զան պիտի շինենք . Սեփականացած հայրենիքի մը մէջ .  
ինքնավար հայաստանի մէջ .

Կոզմու — Քանի որ ըսքան յուսով էք թը՝ քըն-  
չիք մը ժըմընակէն հայաստանը տի աղատիք . գրաւօք  
դուրամ առէք էվ պետքերնիդ հըզըցէք .

Գուրգեն — Եթէ ամբողջ հայ ազգը քեզի պէս մտա-

ծէ . այն ատեն է որ գրաւով դրամ առնելու վրայ պիտի  
խորհուր . բայց այն ատեն ալ ո՞վ դրամ կուտայ անանկա-  
ցողին . ատիկայ անանկութիւն է . Մնանկ են անոնք որոնք  
աղզը և հայրենիքը իրենց քակիրն մէջ միայն կը փնտան .  
ես կը տեսնեմ որ դուն պէտք ունիս քու խրատներուդ :

Կողմու — Անանկ է նը . բաց ասիմ էլ վէօջ ամա-  
չեմ . ծառայական տամակ առնելու հըմար քուտան դու-  
րուշ չիտի կայնամ տար :

Գուրգեն — ( հանդարտօրէն ոտքի ելլելով ) 20 դրուշ  
չես կրնար տալ . սակայն օր մը երբ Գաբրիէլ հրեշտակը  
զայ ունեցած հարստութիւնդ ամենքը մէկէն պիտի տաս .  
Մնաք բարով . ( կը մեկնի )

Կողմու — Տէրը չնորճ տայ . . . ( երկար շունչ մը  
առնելով ) Ու՛Ֆ . . . ըմմեն ատեն ըստնց խօսք տի հաս-  
կըցնինք . մարդ քընչիյ մը է վեւի խօսելու ալ կու վախ-  
ենայ . ինչու որ յըղափութական ին . . . Ուսկից ալ կեղ-  
լեն աս խաչագողները . Վէօրիի հըմար . ըղքատի հըմար .  
յըղափութական քանի մը տեսայներիւ հըմար . վուամոււն-  
քի հըմար . Սրահի հըմար . Գրգի հըմար . Լուրապրի հը-  
մար . հըմար . հըմար . վիւրիւշիւ հըմար . ինծիւ հըմար .  
չիւկայ . Հայ լինելու ալ գղջացի . . . թը որ ամօթ չըլ-  
լիւր Տաճիկ տըլլէի . ( հաւիւններ կը զննէ ) :

### ՏԵՍԻԼ Գ.

#### ԿՈԶՄՈՍ ԵՒ ԴԱՆԻԷԼ

Դանիէլ ( Վրան գլուխը օտկելով . մեկուսի ) Տեսնեմ,  
քովի ապարանջանս պիտի կրնամ իբրեւ ոսկի այս մար-  
դուն քով գրաւի դնել . ( շոյոտօրքելով՝ բարձր )  
— Բարեւ Տիար :

Կողմու — ( Տեսեալին մէջ հաւիւնները նայիլ ձեւա-  
ցնելով, մեկուսի ) Աս քըզի հաս մ'ալ, ընպատճառ տամ-  
սակ ծախելու հըմար եկած է . . . էլլեմ վեց գերը դընեմ .  
կը վախեամ ուր գիտուս փորձանք մի կու բանայ . ( կը  
մտածէ ) :

Դանիէլ — ( Մեկուսի ) Արդեօք խաչագող ըլլալս հաս-  
կըցա՞ւ՝ որ բարեւս չառներ . . . :

Կողմու ( Մեկուսի ) Պինթ էսեջ անգամ մը փորձեմ .

Դանիէլ — Բարեւ Տիար .

Կողմու — Բարին արեւուդ աղա . վըճըկահանութեան  
տամակ կուզի՞ք .

Դանիէլ — Ո՛չ :

Կողմու — Հուրամանքնիդ Յեղափոխականի ք .

Դանիէլ — ( Վարանոս ) Ո՛չ . . . ը՛ն այ՞ . Այո՛ :

Կողմու — ( Վրդոված տեսեալին մէջ կը նայի, մաս-  
նեւուն ծայրովը հաւիւններ ընել կը ձեւացնէ ) : Ազգին  
գործերէն ի՛նչ լիւր կայ աղա .

Դանիէլ — Շատ զէ՛ն . սակայն կը կարծեմ թէ վեր-  
ջնրնիս լաւ է :

Կողմու ( Առանց դիմել փոխելու ) ծառայականս ալ  
ըտ'գէս կը կարծեմ :

Գանիել — (Մեկուսի) Կերեւի թէ շատ զբաղուած ըլլալուն արժող հրամաններու մտոցաւ (բարձր) կրնամ նստիլ. Կողմուս — (Կեղծ Բաղախալարութեամբ) հուրամանք է, հուրամանք է .

Գանիել — Շնորհակալ եմ. (Լուրջ ձեւով մը նրա-  
օելով՝ մեկուսի) ազգասէր մարգուճը կը նմանի աւելի  
զբաւ փրցնելու համար, ինքզինքս թունդ յեղատիտական  
ձեւացնեմ. (վճռագին հառաչանքով մը բարձր) Ախ Գեւ-  
ման թուրք կառավարութիւնը անխնայօրէն հոգերը կը  
տարազրէ, ու կը չարչարէ, թշուառութիւնը իւր վերջին  
զագաթնակէտին հասած է. վսեմաշուք Պօղոս փառայէն  
նամակ մը եկած է. Տեղույս Բարեգործական Ընդհանուր  
Միութեան. հայ փախտականներուն օգնելու համար.  
ինչպէս նաև Ռուսաստան գլխում եղած է նոյն նպատա-  
կաւ. (խարոֆ կը հազայ, բաշխմակին մէջ դնելով խու-  
լը՝ կը ծալէ եւ կը պանէ .

Կողմուս — (Մեկուսի) Աս կատու շան տղան մեկուսին  
էլի կծու յեղատիտականի կը նմանի. ձեռք բարով եր-  
թալու է. (սեւալիք քիլքասելով) ասոր ինծի փորձանք  
օր մը կերնվայ (բարձր) ալա սա լիւրերը նոր եկան .

Գանիել — Այո՛, եւրոպական թերթեր չէ՞ք կարդար :  
Կողմուս — Վէ՛՛ջ .

Գանիել . (Գրգանէն եւրոպական թերթ մը հանելով )  
եթէ չէք ձանձրանար, աւելի մանրամասնօրէն ձեզի տե-  
ղեկութիւններ տամ (թերթը ֆրանսերէն լեզուով կը լիքսէ)

Կողմուս (Հեզնանքով) շնորհակալ եմ. (սեւալիք  
զննելով մեկուսի) ինծի կերեւնայ թը՛ սա մարդիկները,  
բան գործ չունին լուրագիր կը կարդան. էլ ամսակ կը  
ծախեն :

Գանիել — (Փարզմանելով) Կաթողիկոսը տեղույս  
Առաջնորդին հրահանգ տուեր է, փախտականներուն ի  
նպաստ հանգանակութեան ձեռնարկել. Առաջնորդ սրբա-  
զանք անմիջապէս գործի սկսեր՝ և իր գրիչը փախտա-  
կաններուն տրամադրեր է . . . Առաջնորդարանին մեծ  
պաշտօնակները ժողովուրդին օրինակ հանդիսանալու հա-  
մար, անմիջապէս հանգանակութեան 1000ական ոսկի նը-  
ւիրեր են . նաև որոշեր են ինքնաբերաբար մինչև պա-  
տերազմին վախճանը այդ նպատակին յատկացնել իրենց  
ամսաթոշակները ամբողջութեամբ : փոքր պաշտօնակները  
500ական ոսկի նուէր և իրենց ամսաթոշակներուն կէսը .  
Քահանաներն ալ Առաջնորդարանի մեծ պաշտօնակներուն  
նման, 1000ակոսն ոսկի նուէր, ինչպէս նաև կնուէրքէ,  
նշանաւորքէ հարանիքէ և թաւումէ (սեռելով) կըրկ-  
նակ պահանջով ձեռք անցուցած շահերնին . իսկ եկեղեց-  
ւոյ պաշտօնակները, ժամկույ, լուտարար և էն 50 ական  
ոսկի նուէր և քահանաներուն նման ձեռք անցուցած շա-  
հերնին (թերթին միւս էջը կը լիքսէ .

Կողմուս — (Մեկուսի) Հասկցայ ուր ընթացի լուրա-  
գիրը տի կարգայ . . . բան չունին նէ մտիկ արէ, (զուր  
կը խմէ) :

Գանիել — Եկեղեցւոյ կալուածները եղող ամբողջ դա-  
տարկ արտերը, որ (արարներու բարիք ըլլալու համար  
իրբեւ աղբանոց ձգուած էին) Հոգաբարձութեան կողմէ  
չէնքեր շինուելով, եկած վարձքերուն հասոյթը, ամբող-  
ջութեամբ սոյն նպատակին պիտի յատկացուի Ազգա-  
տախնամ Ընկերութիւնը իւր անձնուէր քննիչներու և  
լրահանրու շնորհիւ, իր մէջէն պիտի նուազնէ քմտա-  
ճույքի համար նպաստ ստացող կամ բաշխող անդամները  
և անոնց համար վտանուած գրամը պիտի տրամադրէ սոյն

նպատակին : Ուսուցիչները իրենց աշակերտներուն օրինակ ըլլալու համար, Առաջնորդարանի պաշտօնեայիններուն օրինակին հետեւեր են, և դասախոսութիւնները մէկդի թողելով հանգանակութեան սկսեր են : Սոյն նպատակին համար վաճառականները պիտի տան իրենց շահուն 400ին 25ը . . . Ներողութիւն, ( ձեռք վառչին երկարելով ) կրնամ խմել . ( Կոզմու վախճալով որ գուցէ Դանիէլ soul-սա՛լ կը գոլնայ, զանոնք աւելի իր մօտ կը սեղափոխէ : Դանիէլ — ( Մեկուսի ) Այս մարդը խուլ ըլլալու է . ( բարձր ) ներողութիւն կրնամ խմել . Կոզմու — ( Շուտ ընդ փոքր փառչը տալով ) Հուրամնցէք . Դանիէլ — Շնորհակալ եմ . ( կը խմէ ) . Կոզմու — ( Մեկուսի ) Ընծի անանկ կուգայ ուր, Սեղանաւորներուն հըմար ալ բան մը տի կարգայ . . . բայց ի՞նչ ըլլի ալ նը . . . վէօջ վատուկած դուրամէս մաս մի տի տամ, վէօջ ալ տամակ տի արնեմ . ճիլէրս ի վար . . . Դանիէլ — ( Շարունակելով ) Հարուստները և կալուածատերերը 100ին 30ը : Կիները իրենց փուտրայի, ներկի, զլխարկի ծախքերէն մաս մը խնայելով ամսական 100 դահեկան : Երիտասարդները իրենց Պրիաուսոյի ծախքերէն 200 դահեկան : Ծխողները և ըմպելիք գործածողները օրական մէկ մէկ դահեկան խնայելով 30 դահեկան : Սեղանաւորներն ալ իրենց առած տոկոսին կէսը ( գրգանէն ծխախոտի տուփ մը հանելով բարա՛լ սիլիար մը կը փարքէ ) : Կոզմու — ( Մտնելով ման կուգայ աչքը Դանիէլէն չը գտնելով այս մարդկանց ձեռքէն աղատելու հըմար առկից վերջ եկողին զալողին Ասորի եմ տ'ասեմ : Դանիէլ — Ես այս յօգուածը պէտք է թարգմանեմ և

29-65555

«Յուսաբեր»ին մէջ հրատարակել տամ . անշուշտ «Յուսաբեր կը կարգաք : Կոզմու — ( Շուտամ ) Հուրամանքէ . . . վէօջ, վէօջ : Դանիէլ — Զարմանալի է, որ ձեզի պէս ազգասէր մը լրագիր չի կարգար : Կոզմու — Հոգեքս շատ են : Դանիէլ — Ուրեմն սա մասն ալ ձեզի կարգամ . ( կը լփրսէ ) . Կոզմու — ( Մեկուսի ) Մեծ սխալ արանք՝ ըսանք թը լուրագիր չիմ կարգար, չիլէ կատու շան տղան տարուան մի լուրագիր ալ զուրկէ ինծի : Դանիէլ — ( Աւելի եռանդով կը շարունակէ ) գործաւոր դասակարգին համար ալ մեծ տեղ մը պիտի պատրաստուի . սրպէս զի երեկոյնները անձնուիրաբար փախըտականներուն հազարատեղէն և ազլն պատրաստեն կուսակցականները իրենց թատրոնի նպատակներով և պրօպագանտով պիտի օժանդակեն . Ազգային Ընկերութիւններն ալ հանդէսներով և ներկայացումներով ( կը լփրսէ ) : Կոզմու — ( Մեկուսի ) Աս կատու շան տղան տօմակին խօսքը տի բանայ, վիւրիւշ խօսք միւ լսանալու է ( բարձր ) ազա սա լիւրերուն հըմար հուրամանքնիդ հոգնեցուցանք . Դանիէլ — ( Իմ Յեղափոխական պարտականութիւնս է, հայրենակիցներուս անձնուիրաբար այս տեսակ լուրեր հաղորդել : Կոզմու — Յուսով իմ թը՝ վիւրիւշ ընդամենը ալ Կոզմու գալու ըլլիւք նը, ինծի սա տեսակ լիւրեր տալու չի տի մոռնաք . Դանիէլ — Անշուշտ բաւական է որ տուած լուրերէս գո՛ն մնացիք :



Կոզմոս — Շատ իւ շատ ( ման կուգայ ) :

Դանիել — Ուրիշ լուրեր կան . . . թէեւ ոչ այնքան կարեւոր . եթէ կուզէ՞ք կարդա՞մ :

Կոզմոս — ( Տոկ ելած ) վէօշ, վէօշ . շնորհակալ եմ կարեւորը պէտք է մըզի, ( նեղութեանն նաղաս գլուխը բանալով ֆեսով կը հողմահարուի եւ աւելի արագ արագ ման կուգայ ) :

Դանիել — ( Մեկուսի ) է՛հ, տուած լուրերս կլլեց գնաց : Ապարանջանը ոսկիի տեղ կլլեցնելը միաց :

Կոզմոս — ( Հաստատեց ) Հուրամանքնիդ աս խընդիրքներին մէջ ի՞նչ բանօք օգտակար տի կայնայ ուլլալ :

Դանիել — Պրօպականտներու և ներկայացումներու օժանդակելով, ձեռքը նորէն փարչին երկարելով ) ներդրութիւն առաւօտուն ֆուլ կերայ՝ շատ ջուր կը խմցնէ . ( կը խմէ . )

Կոզմոս — Նորէն շան աղան տօմակիւն խօսքը տի բանայ , ալ համբերութիւնս հասաւ . իշ որ տըլլի նը թող ըլլի . աս դատարկ մարդիւն, քանի մը խօսք տի անիւմ, ճիւղերս ի վար ( բարձր ) աղա քնչիյ մ'ալ իս մտիկ արէ :

Դանիել — Հրամանցէ՛ք :

Կոզմոս — ( Կը նստի կիրճով ) Ձերիւն ըրրըպականտին բան մը խորըթելիւք չունիմ . . . բայց թէվատրոնիս համտէսիւ նուպատի համը փախցիցիւք . էրեկուան օրը բարեկամ մի եկաւ Օրբերուն հըմար , նուպատ կայ ըսելով ինծի քաչեց թէվաթրօն տարաւ էրեսիւն գրուէ ելայ , էվ գիշերվայ գործերէս ալ ետ մնացի , քնչիկ մը էրէջ էլ , վիւրիւշ մէյ մը եկաւ . Հինչանկեաներուն նուպատ կայ ըսաւ իւ թէվաթրոնի տօմակ մ'ալ ան տուաւ էվ ըմմէն օր ըս տեսակ տօմակներ կը բերին ընծի . միյ մ'ալ էլերիւք կըսեք իւր վատուկած գուրամիս կէսն

ալ փախտականներուն տամ . չիւք մուամուտար թը՛ վախճանն իշ տըլլի թը որ վատակիւս կէսը ընոնց տամ . էվ մաս մ'ալ ձերիւն բերած տօմակներին տամ նը քընչիյ մը ժըմընակուայ մէջ գուրամս կու լումունայ . էվ իշ որ ունիմ նը գուրաւ կը գունիմ կուտիմ . էտքին ալ ծառայականս առանց օտնըմանի աս էրկրէն կու փախչիւմ փախտականներուն քով կ'երթամ . ( կը հազայ ) :

Դանիել — ( Մեկուսի ) Օձօ՛ սխալ գուռ ենք զարկեր , խօսքը փոխելու է . ( հիացմամբ բարձր ) Կեցցեն հայրենակից , կը տեսնեմ որ կատարեալ հեռատես էք . նոյն դիտողութիւնները ես ալ մեր ժողովին մէջ յայտնեցի . բայց մեծամասնութիւնը հակառակեցաւ ըսելով թէ՛ հրամանը կաթողիկոսէն և Պողոս փաշայէն եկած է .

Կոզմոս — ( Սիրս առնելով կը օտուրակէ ) Հրամանը ուակից ուր կ'ուղէ թող գայ , ծառայականս չի տի կրնայ գուրամ ալ , լումունցաւ :

Դանիել — ( Մտեմաբար ) Ազատ է՛ք :

Կոզմոս — ( Շարունակելով ) Ընչու որ մէկ երկու շըբաթ էոնջ քանի մը խաբիբայ յաճախողներու հանդէպեցայ . ըմմիճական հարուստութիւնս փուճացուցին . հըմայէկս քնչիյ մը գուրամ ունիմ , անով գործ կու դարձունեմ , էվ չոր հաց մի շատ դըժվարօք կու ձարիւմ՝ ( կը խմչէ եւ վերաբերիմ եղբերով բիրը կը արբէ . )

Դանիել — ( Ոսֆի ելլելով , մեկուսի ) Շատ ուշ մընացիր եմ , ուրիշ սեղանաւոր մը գտնալու է :

Կոզմոս — էվ ըդ պատճառօք խնդիրք կանիւմ իւր , վէրիւշ ընգամ ինծի տօմակ ( ձեռքին փողի ձեւ տալով մէչէն կը խօսի ) չի բերիւք , չի բերիւք . . .

Դանիել — ( Ապշած ) Բայց ես ձեզի տօմակ բերած չեմ :

Կոզմոս — Հասցա Բուշ բանի հրմար ֆէօս էկած իւք.

Դանիել — Ոսկի ապարանջան մը գրաւ գնելու :

Կոզմոս — Ոսկի ապարանջան մի . . .

Դանիել — Այո :

Կոզմոս — ( Արսորեօֆ ) Վէօսքթ պագնեմ աղա նիստ տեսնեմ : ներող եղիր . հարստութիւնս երթալէն ապիւն . ջուղային եղած իմ , ըմմեն ժըմբնակ , ըսպէս հաշիւ չարած , կու խօսիմ : նիստ աղա , տեսնեմ ըզ ապարանջանը ի՞նչ տեսակ բան է .

Դանիել — ( Թուլքի կտրմեռով փարքուած ծրար մը ցերեկայացնելով ) Հրամանդէք :

Կոզմոս — Նիստ մինչս . ( Ակնոյ մը զնելով , ծրար կը բանայ ապարանջանը հանելով փորձաբարին կը ֆսէ : )

Դանիել — ( Նստելով մեկուսի ) Ո՛ր զածիւզ չափ փորձէ , այս ապարանջանը գաղտնապահ է , ինքզինքը չի մատնիր :

Կոզմոս — Աղա ապի հուրամանքիդ է .

— Դանիել — Այդ ի՞նչ խօսք է .

Կոզմոս — ( Խօսք ետ առնելով ) . Ըսել կուզիմ ուր կըյնայ ըլլար իւր գեանէն զանիւք .

Դանիել — Ա՛խ գեանէն գտնելու բարդը չունիմ . սասնկ երթայ նէ գեանը ինծի պիտի գտնայ :

Կոզմոս — Աղա ֆէօք մի աներ , մեծ է Տէրօջ զօրութիւնը :

Դանիել — ( Լալ կեղծելով ) Ինչպէս հոգ չընեմ , ողորմած հոգի մօրս յիշատակներէն միայն այս մնացած էր , ներկայ պատերազմը այսպէս ձեռքս պիտի յախտակէ :

Կոզմոս — ( Դանիելը մխիթարելու համար կոնակը ձեծելով ) Աղա ըս նեղ օրերն ալ կու անցնին , ծառայականս ալ շատ ըսպէս օրեր տեսած իմ . աղա հուրամանքուդ քանի՞ ոսկի կուզիս , վայրը աղքը կազատուի , ըմմեն բան կուլի (կը հազայ եւ գետնը մը բլնէ : )

Դանիել — ( Արձուներ սրբելով մեկուսի ) Ոսկի ապարանջանը ոսկի գրամները գուրս պիտի հանէ . ( բարձր ) Ը՛ն — 7 ոսկիի պէտք ունիմ .

Կոզմոս — 5 ոսկի կըյնամ ալ , ան ալ հուրամանքնուդ հայ էլ ազգասէր միջն ըլլալուդ հրմար , ուր ըս նեղ օրերդ անցունես .

Դանիել — Ես արդէն կուանցի ձեր ազգասիրական գզացումները , սատր համար առարկութիւն չեմ ընեմ :

Կոզմոս — Էլ սա ալ ըսիմ իւր , 100ին 5 տոկոս կուսնիմ :

Դանիել — Հասցա ինծի ըսին , որ 100ին 2 տոկոս կուսնէք .

Կոզմոս — ( Համոզիչ ) Ա՛նի պատերազմէն էսէջ էր , հրմարէկս պանդնակն անգամ . տոկոսով գրամ չեն տար . էլ զինն ալ պէտք է իւր . ծառայականս քըզի պէս ազգուէր էրիտատարդէ մի՛ ըմմենէլիւն տոկոս չի տի առնիր թը որ գիրքս բարով ըլիիր :

Դանիել — Այդ ձեր ազգասիրական գզացումն է . Աստուած ձեզի պէս ազգասէրները պահէ .

Կոզմոս — Քրնի՞ ըմտուան հրմար կուզիք .

Դանիել — Երկու սոմուան :

Կոզմոս — ( Սացազիքը պատասխելով ) Հուրամանքիւդ անուր ի՞նչ է .

Դանիել — Դանիել կոկորդիլոսեան .

Կոզմոս — Այ ի՞նչ տեսակ անիւն է .

Դանիել — Հայրս ուղած ատենը աչքէն արցունք կը հանէ եղեր , սատր համար :

Կոզմոս — Օ՛րդ բանն Աստուածպետական տիւրք է . ( Սացազիքը կը յանձնէ . Դամարկը կը բանայ , ապարանջանը կը տեղաւորէ եւ գրամները կառնէ . գրամարկը կը կոկորդիլոսի բանալին կը պաննէ . գրամները ֆանի մը անցում

ուսարուբեամբ կը համրէ . այդ միջոցին Դանիէլ դրամարկղը կը զննէ .) Անա՛ քրդի հինգ ոսկի. 1 2-3-4-5 .

Դանիէլ — Շնորհակալ եմ : Մնաք բարով :

Կոզմոս — Էթաք բարով : Տէրը բանդ յաջողէ : (Տուած ստացագրին կտրոնը կընդօրինակէ ձեռաստերին մեջ) .

Դանիէլ — (Մեկուսի) Արդէն յաջողեցայ, առիթ մը ներկայանայ (դրամարկղը մտնանուցելով) սա հարստութիւնդ իրաւին փճացնեմ, այն ատեն բանս աւելի կը յաջուի . (կը մեկնէ) .

Կոզմոս — (Դործը աւարտելով) Ասի ալ Յըղատիսական է . . . բայց բարօք մարդիս մի կու նուժանի . (այդ պահուն դուրսէն խառնիճազանն խուլ ձայներ, խանութներու դուռներ եւ ապակիներու կտրտուիլը կը լսուի : Կոզմոս ակնոցը քիչ դնելով փողոց կը նայի, յանկարծ կսկսի դողալ ու կակաղելով) Վա՛յ տիւնս աւրաւ, արագները խանութները կը կողոպտին (շուարած խանութին շորս կողմը կը քշի : Տոմսակները կը ժողվէ, դրամարկղին մեջ դնելով կը կղպէ, յետոյ զայն պաշտպանելու կըլլայ) :

Տ Ե Ս Ի Լ Դ .

ԿՈԶՄՈՍ, ԴԱՆԻԷԼ յետոյ ԳՈՒՐԳԷՆ

(Դանիէլ վազելով տեսարան կուզայ, ինքզինքը աւրաք ձեւացնելու համար կը հանուի . վարտիով եւ երկայն շայիկով կը մնայ եւ գլխուն քաշկիճակ մը փաթեղով, դրամարկղին կը մօտենայ : Կոզմոս զայն տեսն-

լով, կը նուազի . արտոնին վրայ կիյնայ . Դանիէլ անոր գրպանէն բանալին կառնէ, անապարանօք դրամարկղը բանալու կաշխատի :

Գուրգեն — (Շտապով բանի մը փայլ աչ եւ ձախ երթալէ վերջ կանգ կառնէ մտանոց) : Արդեօք ո՞ր կողմ հայրենակիցներուս խանութները կը կողոպտուին, և իմ օգնութեանս պէտք ունին . . . (աչ կողմը ուղղուելով) նախ սա կողմը երթամ . (Դանիէլը կը տեսնէ . անմիջապէս ասնանակը հանելով անոր կուղղէ) Ի՞նչ կընես հոս :

Դանիէլ — (Սարսափած) Պարտնին օգնելու եկայ արժէքաւոր իրեղենները սպասով տեղ մը փոխադրելու համար :

Գուրգեն — (Կոզմոսը ցուցնելով) Այս ի՞նչ է հոս :

Դանիէլ — Դուրսի պատահած դէպքէն աղղուած վրան մարելիք եկաւ :

Գուրգեն — (Կասկածանօք) Ուրեմն կեցիր, որ ինձի օգնէս . (Դանիէլ ակամայ կը համակերպի : Գուրգեն բարշով ջուրը Կոզմոսին երեսին կը նետէ, որը տակաւ սակաւ ուժի կուզայ, նոյն միջոցին Դանիէլ փախչիլ կը փորձէ . Գուրգեն զայն կը նժմարէ) տեղդ կեցի՛ր թշուառական . թէ ոչ գլուխդ կը պայթնցնեմ :

Դանիէլ — (Աղաչելով) Գլուխս մի՛ պայթնցնիր, կ'երդնում, որ ես դայն կը փոխեմ :

Գուրգեն — (Վեհանձնօրէն) լաւ քիչ մը սպասէ, (անգամ մ ալ բարշով ջուրը Կոզմոսին երեսին կը նետէ) :

Կոզմոս — (Իսկոյն ցնցուելով կը սրախի, ու նանչնալով Գուրգենը, դուրդալով կը պաղատի) Այս, ներող եղիք, ինձնից ո՞ր մ'առնիք, թէլսարոնի տօմսակները առէք կ'առնիւմ :



Գուրգեն — Բեզմէ ո՛չ ոխ ունիմ առնելիք, և ո՛չ ալ տոմակ ունիմ ծախելիք. մի միայն անգամ մը նայէ, որ բան մը գողցուած է՝

Կոզմու — Դամարկը կը բանայ մեղինները զննելով ) բան մի գողցուած չէ աղա .

Գուրգեն — ( Դանիելին ) Ուրեմն կորսուէ սրկէ, թշուառական . ( Դանիել երախտագիտական արտայայտուով, զգեսք կրճագնի ու կը մեկնի . )

Կոզմու — ( Գուրգենին վերադառնալով ) Դայր համբուրելով ( աղա ձիւերդ պագնիմ . . . Մենչիւկներու սիրուն իս ասկից ազատէ, քանի ոսկի ուր կուզիս նը քրդի կուտամ

Գուրգեն — ( Վեհանձնօրէն ) Հը՛, Յեղափոխականները, կաշառքով իրենց ազգը չեն պաշտպաներ . ( հեղնական ) տուն ունիս . . .

Կոզմու — Հուրամանք է .

Դանիել — Շուտ գոցէ խանութդ, քիզի տունդ յանձնեմ : Գիչ մը վերջը անգլիական կառավարութեան չնորհիւ խաղաղութիւնը կը տիրէ, նորէն կուգաս գործդ կը շարունակես :

Կոզմու — ( Վիճակահանութեան տուները գլխարկին մեջ, եւ արժեքաւոր ծրարները գրպանները ու ծոցը լեցնելով, նուաւսացած ) Ըսկից վերջ՝ թէ՛վաթրօննէրիւ ըմմէնէ թանկը տօմայները՝ իրենց տեղերէն ձեռքս տի գնիմ .

Գուրգեն — Օ՛ն աճապարենք :

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



Եթէ իրդ դարու ֆրանսական թատրոնին վրայ ակնարկ մը նետենք, իրարմէ անբաժան երկու անուններու պիտի հանդիպինք, Պ. Պ. Ռ. տը Ֆլէս և Ժ. Ա. տը Քայլալէ : Այս երկու հեղինակները միասնաբար յառաջ կը տանին օրուան բարքերը ուսումնասիրող թատերա-զուեչտական սեռ մը . սեռ մը, որ թերեւս երկու հեղինակներէն ո՛չ մին և ո՛չ միւսը կատարելապէս յաջողէր եթէ առանձին փորձէին :

Այս երկու հեղինակները իրենց սրամիտ թատերախաղերով երեւան կը հանեն ժողովուրդին թերութիւնները, ճքանչելիօրէն պատկերացնելով զանոնք .

Մեր մէջ այս դպրոցին ներկայացուցիչը, կամ աւելի ճիշդ ասլիւրան, ըլլալու կոչումն ունի Տ. Ե Մկրտչեան : Արդէն բազմը ունեցանք անոր մէկ քանի թատերախաղերը վայելելու, որոնց մէջ հետզհետէ անսանք թէ՛ ինչ աչքաու յարմարութիւններ ցոյց տըւաւ ան :

Այսօրինակ խաղերու ընթացումը թերեւս շատերուն տարակ կամ անհաճոյ թուի ինչպէս նաեւ անխորձ դերակատարներու համար անյարմար, սակայն լաւ բնաւարութիւն մը ցայտուն կերպով կը պատկերացնէ խաղին հոգին, ղի անոր մէջ ամէն մէկ անձի որոշ բնաւարութիւն ու շարժումն տրուած է և որպէս զի խաղարկութիւնը կատարեալ ըլլայ, պէտք է որ դերակատարը իրապնէ այդ բնաւարութիւնն ու շարժումները :

Գաղտնիք մը տալու համար թէ՛ ի՞նչ ազդեցութիւն ըրած է Վալսառուն հանդիսատեսներուն, կը բաւականանամ մէջտեղ բերել Գահիրէի «Յուսոբեր» լրագրոյ մէջ

համբաւաւոր նկարիչ Տ. Ե. Տէմիրճեանի, այնքան կենդանիօրէն գրած նկարագրութեան մէկ մասը .

« Չգիտեմ ինչ մը կայ, ցայտուն, ձկուն, դերասան-  
« գրողներուն գործերուն մէջ, անոնց՝ որոնք կը ներկա-  
« յայուին իրենց հեղինակներէն ուղղակի, ինչպէս Մօ-  
« լիէտինը, Շէքսպիրինը եւ չն. որոնք այնքան արտի մօտիկ  
« են և իրական, որքան և կատարելագէտ բնական, ինչ  
« որ անմիջական կընէ անոնց ազդեցութիւնը և որ կը  
« սրկի գրողներու բնական արտայայտութեանց մէջ,  
« որոնք թերեւ գրական գոհարներ ըլլան, սակայն զուրկ  
« են այն աւիւնէն, այն խանդէն, որ միշտ արթուն ու  
« կանգուն կը պահէ հանդիսատեսը : »

Պ. Սիտուան՝ Երիտասարդ Հայաստանի Գահիրէի թըղ-  
թակիցը իր նկարագրութեան մէջ սասկէս կըսէ .

« Այդ գաւեչախն մէջ տեսնէք մենք երեք գլխաւոր  
« թիւիեր, վաշխառուն, յիզախիտականը և խաչագողը,  
« որոնք գրեթէ միշտ ալ գոյութիւն ունեցած են և քով  
« քովի ապրած հայ իրականութեան մէջ . »

\* \* \*

Վաշխառուն խաղարկութիւնը շատ յաջող եղաւ .  
Տիար Երուանդ Մկրտիչեան մեղի ներկայացաւ իբրեւ արի-  
պար վաշխառու մը . իր խօսակերպը, նիստն ու կացը  
կատարեալ էին . մեծ յաջողութեամբ պատկուեցան նաեւ  
Պ. կայծակ Ծարօղեան, Յեկափոխականի և կարապետ  
Սարաֆեան լյաչագողի դերերով :

Գանձիւրէ, 30 7 18

Վ. ՇԱՊԻՆԵԱՆ



201  
201 5  
ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ի մօտոյ յոյս կը տեսնեն

---

ԶԿՆՈՐՍ ԶԱՔՍՐ

ՄԵՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ

ԽԱՆ-ԽԱՆԻԼԻ ՈՍԿԵՐԻԶՆԵՐԸ

Ս Ա Փ Ր Ի Զ Ը

ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻԶՆԵՐԸ

ՀՈՎԻՒՆԵՐԸ

ԱԻԱԶԱԿԱՊԵՏԸ

ԲԱԲԵՆ, ԱՂԱ

---

ԳԻՆ 5 դահեկան

---

Տպարան Օ. ՀԱՆԳՈՒՍՈՒՆ Գահիրե:

44439